№ 67 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՄԱՐՏԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 10 ռուբ.
Կէս տարին . . . . . 6 ռուբ.
Ամսական . . . . . 1 ռուբ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . 12 ռուբ.
Կէս տարին . . . . . 7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պիտի վերջանայ անպատճառ յիսուգայ որեւէ ամսի վերջին։

Ապրիլի մէկից մինչեւ տարւայ վերջը արժէ 9 ռուբլի։

ՆԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐ. և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԷ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԷԿ (կարելի է և նամականիշով) և հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 24 ՄԱՐՏԻ № 67

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ.—1-ին երեսի վրայ տողին (պետիտ) 10 կոպ., Կովկասից դուրս՝ 20 կոպ., 4-րդ երես 5 կոպ., Կովկասից դուրս՝ 10 կոպ.։

ԱՆԳԱՌԻԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Խմբագրութիւնը բաց է 9—3 ժամ., գրասենեակը 9—3 ժ. ցերեկ. և 6—8 ժ. երեկ.։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԻ ՄՕՏ՝ ժ. 2-ից մինչև 3-ը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Оризонъ".
Солодакская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57.
կամ Tiflis (Russie, Caucase), Redaction „Horizon".

ՕՐՒԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արեւմտեան ճակատում ջրերի վարարման պատճառով տեղի են ունենում միայն աննշան ընդհարումներ։

Կովկասեան ճակատում գերի է բռնւած թիւրքական գարծեալ երկու վաշտ նոր եկած զօրքերի կողմից։ Մուշ-Բիթլիսի շրջանում ռուսներն առաջ են շարժւում հարաւարեւմտեան ուղղութեամբ։

Թիւրքիայում գէնքի են կոչւում 1896 և 1897 թւականներին ծնւածները։

Բալկաններում Գեւգելիի և Դոյրանի շրջանում տեղի է ունենում թնդանօթաձգութ։

Վերդէնի մօտ ֆրանսիացիները հակա-յարձակումներով յետ են շպրտել թշնամուն և նորից գրաւել Վօ գիւղի արեւմտեան մասը։

Բուդապեշտում մեծ ցոյցեր են տեղի ունեցել հաշտութեան օգտին։

Ո՞Վ Է ՍՊԱՌՆՈՒՄ

Անկեղծ ցանկութիւն ունինք հասկանալու մի շարք վրացի հրապարակախօսների հոգեբանութիւնը և մանաւանդ տրամաբանութիւնը։ Բայց օր ըստ օրէ աւելի ու աւելի դժւարանում է այդ գործը։

Վրաց նացիոնալիստները հաւանում քայլեր են անում Անդրկովկասի մուսուլմանների հետ յատուկ դաշն կապելու։ Նրանք չեն թաքցնում, որ վրաց-թաթարական միութիւնը գործնականապէս ուղղւած պիտի լինի հայերի դէմ։ Այդ բանը ասում էր „Зак. Рѣчь"-ը, «Սամշոբլօ»-ն, վերջերս էլ նրանց ձայնակցեցին «Ջվէնի Мцоբարի»-ն ու «Սախալխո Փուրցելի»-ն։ Թէև այս երկու թերթերը այդ միութեան նպատակը անւանում են «պաշտպանողական», բայց քանի որ մենք, հայերս, մեր բանած գիրքը, մեր քաղաքականութիւնը համարում ենք ոչ թէ «յարձակողական», ոչ թէ խմբերիալիստական, այլ միանգամայն արդարացի, ապա պարզ է, որ այդ միութիւնը պիտի գիտենք մեր վերաբերմամբ իբրև յարձակողական։ Հենց այն հանգամանքը, որ վրաց վերոյիշեալ թերթերը խօսում են ոչ թէ երբեք ազգերի համերաշխութեան և միութեան մասին, այլ յատկապէս վրաց-թաթարական միութեան մասին, և ցինիկութեան հասցրած պարզութեամբ յայտնում են նրա նպատակները, իրաւունք է տալիս մեզ վրդովւել և մեզ համարել յարձակման սպառնալիքի տակ։ Մեզ համար ամեն մի կասկածից զուրս է, որ վրացի նացիոնալիստները միրձենում են թաթարներին ոչ թէ փոխադարձ կուլտուրական ձգտումների, ձգողականութեան պատճառով, այլ լոկ թւական, ֆիզիքական ուժից հրապուրւելով։

Եւ մենք մեր հոգեկան հաւասարակշռութիւնը չկորցնելով, լի մեր ազգային պատւասիրութեամբ, ասել ենք. «Բարի վայելում, ում հետ ուզում էք։ միացէք, բայց գիտցէք, որ ընդհանուր համերաշխութեան մասին չէք կարող խօսել, երբ միանում էք յատկապէս մի ուրոյն ազգութեան հետ։ Դա կարծում ենք, տրրամաբանօրէն պարզ է. ինչ երեսով կարող է մեզ հետ խօսել համերաշխութեան մասին այն վրացի հրապարակախօսը, որը մեզ ուզում է սարսափեցնել թիւրք-վրացական մաունաւոր դաշնակցութեամբ։

Այնուհետև մենք ասել ենք և կրկնում ենք, որ այդպիսի վրացիները պիտի հասկանան, որ նման սակաւ-կով ոչ մի կերպ չեն հարկադրի մեզ թողնել այն, ինչ որ վրացիները իրենցն են համարում, իսկ մեզ մերը. կամ խօսելով այդ վրացիների լեզւով չեն կարող հարկադրել մեզ Վրաստանի մաս ճանաչել այն, ինչ որ մենք Հայաստան ենք համարում, ընդունել վրացիներին և թաթարներին իբրև միակ «բնիկ» ցեղեր և այլն և այլն։ Մենք խորհուրդ ենք տւել այդ բանը գիտնալ և սխալ հաշիւ չըտեսնել։

Եւ ինչ էք կարծում. մեր այսպիսի համեստութիւնը, անկեղծութիւնը «Սախալխո Փուրցելի»-ն և նրա հետ էլ „Зак. Рѣчь"-ը համարում են սպառնալիք։

Զարմանում ենք անկեղծօրէն. մի՞ է սպառնում, մե՞նք, թէ դուք. դուք մեզ չառ ոչնչ սպառնալիք էք ուղղում։ Եւ երբ մենք ասում ենք սահմանափակութեամբ, թէ չենք վախենում այդ սպառնալիքից, դուք վրդովւում էք, անւանում մեզ յարձակւող կողմ և շովինիստութեան յորդորներ էք կարդում։ Սա ցինիզմ է, ընդունեցէք։

Բայց ինչ անես։ Մարդու գլուխ պտտւում է այս հոգեբանական և տրամաբանական այլանդակութիւններից, որոնք ծիծաղելի կը լինէին, եթէ այնքան ցաւալի չլինէին։

Ա. Շ.

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

«Le Temps»-ում կարդում ենք հետեւեալը. «Մօտերս առաջ բերւած տեղեկագրի նկարագրած սոսկալի եղելութիւններին ականատես է եղել և գրել մի գերմանացի։ Այս տեղեկագիրն է, որ առաջին անգամ լինելով, հրատարակւում է Բեռլինում գերմանական բարոյական մի բարձր հեղինակութեան՝ «Allgemeine Missions Zeitschrift» բողոքական հանդէսի կողմից, որ հրատարակւում է պրոֆ. D. Julius Richter-ի և B. Joh. Warneck-ի կողմից (տես նոյեմբերի համարը, էջ 506 ից սկսած)։

«Allg. Mis. Zeitschrift»-ը հրատարակում է այս տեղեկագիրը իրաւացիօրէն մտածելով, որ իր պարտականութիւնն է այս հրէշային դէպքերին իրազեկ անել գերմանացի հասարակութիւնը։ Գերմանական զինւորական գրաքննութիւնը 1915 թ. նոյեմբերի 10-ին արգելեց նրա արտատպումը մամուլի մէջ։

Ինչքան այս արգելքը։ Ընդհակառակը, բարոյական մի մեծ շահ չէր սպասւի, եթէ քողարկէր անէին այն դէպքերը, որպէս զի կայսերական կառավարութիւնը գործի լիակատար գիտակցութեամբ իր ազդեցութիւնն ու հեղինակաւոր ձայնը գործադրել կարողանար իր զինակից Տաճկաստանի վրայ՝ դրանց վերջ տալու համար։

Անտարակոյս այս կէտն էր, որ իր մտածմունքի առարկան էր դարձրել առաքելութիւնների պարկեշտ օրգանը, որ չէր կասկածում, թէ այդ վայրագութիւնները մերկացնելով՝ նա իրապէս մի սոսկալի ամբաստանութիւն էր հրատարակում գերմանական կառավարութեան դէմ։

Որովհետև, այսօր դժբախտաբար արդէն պարզ է, որ գերմանական կառավարութիւնը Տաճկաստանի զինւորական աջակցութիւնն ապահովելու համար չէր վարանած հաճոյակատար հանդիսատես լինել, յանախ էլ մեղսակիցը հայ ժողովրդի ամբողջական քայքայման և հաւանաբար առաջիկային էլ Արեւելքի բոլոր քրիստոնեաների։

Պատերազմի նախօրեակին հաստատել էր «Թիւրքիան թիւրքերի համար» կարգախօսը (ստամբուլական և մեթոդիկ վերացումով օսմանեան բոլոր քրիստոնեայ տարրերի)։ Սակայն երիտասարդ-թիւրք կոմիտէն դեռ դանդաղում էր մտադրական կատարածները առաջ բերել։ Եւրոպական պատերազմը նրան տւեց անյուսալի առիթը։ Տաճկաստանի զինւորական աջակցութեան փոխարէն գերմանական կառավարութիւնը carte blanche էր տալիս Թիւրքիային իր ներքին քաղաքականութեան մէջ և փաստօրէն նրան էր յանձնում անպաշտպան հայերին։

Եւրոպային յաջողել էր ազատել Հայաստանը Աբդուլ-Համիդի և մի քանի տարի առաջ նոյն իսկ երիտասարդ թիւրքերի դէմ՝ Ադանայի ջարդից յետոյ։ Երիտասարդ թիւրքերի հետ կայացրած (ամօթալի) գիւեխի կարգով գերմանական կառավարութեանն էր վերապահւում կնքել այս դժբախտ ազգի տապանաքարը։

Հիմա հասկանալի էր դառնում այն պատճառները, որոնցով զինւորական գրաքննութիւնը արգելել էր վերարտադրել «Allgemeine Missions Zeitschrift»-ի տեղեկագիրը։

Այս գիտողութիւններից յետոյ առաջ է բերում գերմանացի ականատեսի տեղեկագրից քաղւածներ, թէ ինչպէս հայ կիններ ծնկաչոք աղերսում էին թիւրք զինւորին խնայել իրենց և երեխաներին, և երբ ականատես գերմանացիները ոտնահարով հարցնում էին. «Միթէ կարելի է կրակել կանանց և երեխաների վրայ», նրանք պատասխանում էին. «Ի՞նչ անենք, մեզ այդպէս է հրամայւած»։

Գերմանացուն ընկերակցող ոստիկանը պատմել է, թէ ինչպէս 3,000 կին Մամախաթունից Բաբերդի շրջանում սպանւած էին։ Երբ հարցրել է ոստիկանին, թէ մեռցնելու համար ինչ կարիք կայ անեղերից հանելու այդ խեղճերին, նա պատասխանել է.

«Այդպէս լաւ է. չէ՞ որ քաղաքներում դիակները կը նեխին»։

Մայիսի 10-30—1,200 ուրիշ երեխայ հայեր ձերբակալւելով—Տիգրանակերտի և Խարբերդի վիլայէթներում քշւել են դէպի Մուսուլ կուսակալի պահակի առաջնորդութեամբ և գտան են ընկել. իսկ նրանց դիակները վաճառքի են հանւել Բ...-ի շուկայում։

Բաղդադի երկաթուղու մի պաշտօնեայ պատմել է, որ Բերեջիկում բանտը ամեն օր հայերով լցւելիս և գիշերով պարպւելիս է եղել (Եփրատի մէջ)։ Գերմանական կաւալերիայի մի կապիտան Ուրֆայի և Տիգրանակերտի միջև ճանապարհի երկայնքին տեսել է անհամար դիակներ։

Տեղեկագիրը հիմնւում է մեծ մասամբ գերմանացի ականատեսների վկայութեան վրայ»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Հայկական սարսափները ամերիկեան հասարակութեան ծանօթացնելու համար,—ասում է Բոստոնի «Հայրենիք»-ը—վերջերս կազմւած ամերիկեան յանձնախումբը, որ կը բաղկանայ տասնեօթը անձնաւորութիւններէ, որոնց բոլորն ալ յայտնի և ձեռնհաս դէմքեր են քաղաքական, գիտական և կրօնական շրջանակներու մէջ, հրատարակած է ընդարձակ տեղեկագիր մը, ուր մանրամասնաբար պատմւած են թիւրք կառավարութեան և ժողովուրդին հայերու վրայ գործադրած աներեւակայելի և փշաքաղող ոճրագործութիւնները։

Յանձնախումբը իր բոլոր տեղեկութիւնները հաւաքած է արժանահաւատ բազմաթիւ և այլազգի ականատեսներու տեղեկագիրներէն։ Վկաներու անունները և բնակավայրերը չեն յիշւած, անոնց թրքական սահմաններու մէջ ունեցած պարագաներուն ... կերպով վտանգ հասցուցած չըլլալու համար։ Յանձնախումբի վկաներուն մէջ

կան հայեր, ամերիկացիներ, պուլկարներ, յոյներ, նոյնիսկ գերմանացիներ և թիւրքեր, որոնց բոլորն ալ կը հաստատեն և կը լրացնեն զիրար։

Մենք հարկ չենք տեսներ—աւելացնում է յիշեալ թերթը—այդ նկարագրութիւնները թարգմանաբար ներկայացնելու, որովհետեւ անոնց մեծ մասը արդէն ծանօթ է «Հայրենիք»-ի ընթերցողներուն և որովհետեւ անոնք իրենց մանրամասնութեանց մէջ այնքան աղեխարշ են, որ ընթերցողին նոյնիսկ ապրելու տրամադրութիւնը կը ջլատեն։

Ա. ԽԱՏԻՍԵԱՆԸ ՄՈՍԿՒԱՅՈՒՄ

Ռուս թերթերը խանդավառ տողեր նուիրեցին Թիֆլիսի քաղաքագլխին։ Նա Կովկասի պատգամաւոր էր Քաղաքների Միութեան Համագումարին և գիտցաւ փայլուն ու հեղինակաւոր ձևով կատարել իր պաշտօնը։ «Утро России» գրում է, որ Համագումարի ամենափայլուն, ամենարուեստ, ամենագունաւոր ճառը Խատիսեանինն էր։ «Бирж. Вѣд.»-ի մէջ—նոյն հիացական տողերը։ Նրա աշխատակից Տանը գրում է. «Ա. Ի. Խատիսեանը ստեղծեց այսօր տրամադրութիւն Քաղաքների Համագումարի մէջ, հաղորդեց նրան այն ոգևորութեան ցոլքը, որով լեցուն է Կովկասը»։ Իսկ վրացի իշխան Տումանով հեռագրում է Թիֆլիսի քաղ. Դումային. «Դրական-գեղարուեստական ակումբի լեփ-լեցուն դահլիճը բուռն օվացիաներ արեց Ա. Խատիսեանին, որը մի ընդարձակ դեկուցման մէջ, սիրուն, անաչառ, տաք ու տաղանդաւոր ձևով ցուցադրեց կովկասեան ճնշուած ժողովուրդների կենսապատկերը... Ռէֆերատի տպաւորութիւնը ահագին է և ես քաղաքական պարտք եմ համարում՝ հաղորդել այդ ի գիտութիւն մեր վրացական հասարակութեան»։

Բոլոր վկայութիւններից երեւում է, որ Ալէքսանդր Խատիսեանի թատերամուտը Մոսկւայի բարձր հասարակութեան մէջ մի խիստ հաճելի անակնկալ է եղել, գրեթէ մի great event, որի մասին չի կարող լռել հայ մամուլը։ Մեզ ուրախացնում են ռուս ու վրացի գործիչների այդ խանդավառ ծանուցումները և մենք սրտանց ծափահարում ենք մեր հայրենակցին, որ հայութեան դէմ յարուցած ներկայ անիրաւ հալածանքների մէջ գիտցել է պաղարիւն ու անաչառ ձևով պաշտպանել Կովկասեան բոլոր ճնշուած ազգերի իրաւունքները և պաշտպանել է այնքան փայլուն հեղինակութեամբ։ Խօսել է մեր լքուած ծայրագաւառի կարիքների մասին, խօսել է ապրելու և գործելու պայմանների մասին, հնչեցրել է պերճախօս ձայնով այդ ժողովուրդների գանգատը շրջապատող այլանդակ պայմանների մասին։ Կովկասի պատգամաւորը չի մոռացել, ի հարկէ, և իր հայ լինելու հանգամանքը։

Խօսել է Ա. Խատիսեանը ոչ միայն Քաղաքների Համագումարում, այլ և բանկետներում ու ակումբներում։ Եւ այնտեղ արդէն—նոյն բարձր, ընտիր ռուս առաջադէմ հասարակութեան առջև—լռել է Թիֆլիսի քաղաքագլուխը և խօսել է հայ գործիչը։ Մեզ հաղորդում են մասնաւոր աղբիւրներից, որ շատ ուժեղ տպաւորութիւն են գործել և պ. Խատիսեանի ճառերը հայկական հարցի ու հայ ժողովրդի նահատակութեան մասին։ Խօսել է Ա. Խ. մի մեծ բանկետում, որին ներկայ են եղել Միլիւկով, Չելնոկով, Կիշկին և այլ պրոգրեսիստ դէմքեր, բազմաթիւ պրոֆեսորներ, գրական և հասարակական գործիչներ, վերջապէս, մի շարք ներկայացուցիչներ լեհ, ֆինն ու այլ ժողովուրդների։ Խատիսեան ճառով դիմել է յայտնի լեհ գործիչ Լեդնիցկիին և վերջինը պատասխանել է, ապա երկուսը գրկախառնուել են դահլիճի բուռն ծափերի մէջ։

Ա. Խ.-ի ատենախօսութիւնը հասարակական ակումբում—Վալերի Բրիւսովի նախագահութեամբ—տևել է ամբողջ 3 ժամ։ Այնտեղ նա խօսել է, ի միջի այլոց, հայ կամաւորական խմբերի, հայոց կրած հալածանքների ու ջարդերի մասին։ Պատմել է վառ գոյներով գաղթականութեան դառնութիւնները և շատ աչքերից արցունք է խլել։

Ատենախօսութիւնից յետոյ տեղի է ունեցել բանկետ, ուր դարձեալ ամենացանկալի հռետորներից մէկն է եղել Թիֆլիսի քաղաքագլուխը։

Արցունք, ծափեր, օվացիաներ... մի արտակարգ աջողութիւն է այդ, որին արժանացել է պ. Խատիսեանը։ Եւ այդ եզակի աջողութեան հանդէպ գրեթէ նսեմանում են այն փոքրիկ վրիպումները, որ արել է հայ հռետորը պերճախօսութեան իր բուռն թռիչքների ընթացքում...

Լսելով նրա բերնից ոգևորուած ձօները և խանդավառ, անվերապահ ջատագովականը որոշ յաղթական ուժերի մասին, հայ ընթերցողը մելամաղձօտ էն յիշում է Վասպուրականի նահանջի օրերը, երբ հիւսւում էր Հայաստանի մահապատանը...

Պ. Խատիսեանի անսովոր աջողութիւնը Մոսկւայի մէջ, այն բազմաթիւ, ջերմ, համակրական արտայայտութիւնները, որ լսեցինք ռուս մամուլի էջերից,—այդ բոլորը ապացոյց է, թէ որքան նպաստաւոր հող կայ Ռուսաստանի կենտրոններում հայկական պրոպագանդի համար և թէ որքան գործ ունի անելու հայ պարտաճանաչ ինտելիգենցիան։

Մ. Վ.

ՄԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գարունը բացւել է։ Գիւղացիութիւնը արդէն ձեռնամուխ է եղել դաշտային աշխատանքներին։ Տաճկահայ փախստականն էլ զգում է, որ մօտեցել է քրտնաթոր աշխատանքի, վար ու ցանքի ժամանակը։ Նա գիտէ, որ մայր-երկրի լայնարձակ և արգաւանդ դաշտերը մնացել են անտէր։ Մշակող չկայ, հերկող չկայ։ Տաճկահայ գիւղացին գիտէ, որ Հայաստանի մի ընդարձակ մասը ազատ է արիւնռուշտ վոհմակների գազանաբարոյ աւազակութիւններից և «հանգիստ», գոհունակ սրտով, երկար ամիսներ իր տարագրական եղբայրների մօտ ապրելուց յետոյ՝ վերստին դիմում է դէպի երկիր իր աւերուած օջախը ու քայքայուած անտեսութիւնը վերականգնելու բուռն տենչով։ Նա գնում է աշխատելու արիւն-արցունքի մէջ, բաց երկնակամարի տակ, իր հարազատների, սիրելիների անյայտ շիրիմների կողքին։ Այնտեղ նա յիշելու է իր անցեալը, իր չէն տունը, իր քոյրերին ու եղբայրներին, որոնք սրախողխող եղան մօտիկ անցեալում։ Նա լսելու է մերձակայ լեռներից կուր անեղ շռինդը, զէնքերի երկնադղորդ շառաչիւնը և նրա սիրտը փղձկելու է։

Արդ՝ ինչ է մեր պարտականութիւնը այդ սոսկալի իրականութեան հանդէպ։ Ի՞նչ ենք անելու այս անգամ, մենք ռուսահայերս, մեր վտարանդի արիւնակիցների այդ ծով կարիքների դիմաց։ Մենք աղէտի սկզբին ջերմագին հիւրընկալեցինք նրանց, կերակրեցինք, հագցրինք և կատարեցինք մեր պարտականութեան կէսը։ Մենք դեռ շատ գործ ունինք անելու մեր եղբայրների կեանքը փրկելու համար։ Տաճկահայն չի անցել համաշխարհային տագնապը, դեռ չի խորտակել վերջնականապէս օսմանեան վայրենի ոյժը, երբ մենք պէտք է յայտ բերենք մեր ամբողջ հայրենասիրութիւնը, պարտաճանաչութիւնը մեր արիւնակից հայրենակիցների վերջնական վերադարձի երանաւէտ օրերին։ Իսկ այժմ, գարնանային աշխատանքների եռ ու զեռ օրերին, մենք պարտաւոր ենք դարձեալ լարել մեր ոյժերը, և շուտափոյթ, անհրաժեշտ օգնութիւնը հասցնել տաճկահայ գիւղացիութեանը։ Գաղթականութեան գործին ծառայող բոլոր ընկերութիւնների ու մարմինների վրայ ընկնում է մի սուրբ պարտականութիւն, հնարաւորութիւն տալու հայ փախստական գիւղացուն վարելու, ցանելու իր հողը։ Կ. Հ. Բարեգործական ընկերութեան առաջ այսօր բացւում է գործունէութեան լայն ասպարէզ, ուր նա կարող է ցոյց տալ իր ոյժն ու օգտաւէտութիւնը։ Պէտք է հոգ տանէ փախստական գիւղացիների վերադարձութեան գործը լաւ կազմակերպելու և երկրագործական անհրաժեշտ պիտոյքները ժամանակին հասցնելու վերադարձողներին։ Բոլոր լրջութիւնը և պահանջը սպառում են մեզ չթողնել ոչինչ (այդ գործի համար)։ Ցապաղելու ժամանակ չէ, պէտք է շտապել, գործ անել։ Աւելորդ են անաւէլ ճառերն ու երկար ծրագիրները։ Այժմ զօրծ է հարկաւոր, կենդանի գործ։

Եւ որքան շուտ, այնքան լաւ։

Կ. Յովհաննիսեան

„ՀՈՐԻԶՈՆԻ" ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

Ղարաքիլիսէ (Ալաշկ.), 9 մարտի

Ալաշկերտի հովտում տեղաւորուած Խնուսի, Բուլանըխի, Բիթլիսի և Մուշի գաղթականները, թւով մօտ 800 հոգի, միանգամայն զուրկ են բժշկական օգնութիւնից։ Արդէն եղել են մահացման դէպքեր։ Ճարահատեալ մի քանի տասնեակ հիւանդներ և վիրաւորներ փոխադրել ենք Կովկաս։

Ամէն օր Խնուսից գալիս են փոքրիկ խմբերով գաղթականներ, մերկ, սաստիկ ցնցոտիների մէջ. իսկոյն հագուստները փոխում, նոր տաք հագուստներ ենք հագցնում, կանոնաւոր սնունդ տալիս։

Պատմում են յուզիչ դէպքեր. օրինակ, Բուլանըխի Բաստաքանց գիւղացի մի պառաւ ծերունի, որ եկել է իր 12 տարեկան աղջկայ հետ, պատմում է հետեւեալ դէպքը.

— Երբ աշիրաթը լցւեց մեր գիւղը, սկսեց կոտորածը. ոմանք կարողացան ազատւել. Խփեցին, 20 տարեկան տղայիս սպանեցին, աղջկաս էլ դափաղելու հրացանով խփեցին, ընկաւ եղբօր դիակի մօտ. ես փախայ սարը։ Երկու օրից յետոյ գիշերը վերադարձայ, որ գոնէ երեխաներիս դիակները հողին յանձնեմ. երբ մօտեցայ, յանկարծ լսում եմ աղջկաս տնքոցը. մօտեցայ, տնտղեցի, խօսեցրի. ոտքից էր գնդակահար, ոտքը ջարդւել էր գնդակից։ Տղայիս դիակը հողին յանձնեցի, աղջկաս շալակս առայ ու գնացի քրդի գիւղ, իմ ծանօթ քրդի մօտ, որ պահեց ինձ և աղջկաս։

Համօ Մակարեան

—

Իգդիր, 17 մարտի

Շարժւեց դէպի երկիր 125 հոգուց բաղկացած մշեցիների մի խումբ։ Գնում են կրկին նրանք այնտեղ, որտեղից մի քանի ամիս առաջ իրարից անտեղեակ, իրարից բաժան, մի կերպ ճողոպրել ու եկել էին... Գնում են կրկին այնտեղ մնալու, վերակազմելու, ապրելու ու ապրեցնելու համար։

Խմբապետը մի քանի քաջալերիչ խօսքեր ասաց իր կրակոտ զինուորներին։ Ապա խօսեց ընկերներից մէկը, ոգևորող, քաղցր ու յուզիչ. «Գնացէք, գնանք... Թող օրհնի մեր ճանապարհը և վերաշինուող Երկիրը»։

Ոստանիկ

ԽՈՏՐՋՈՒՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Բաթում, 17 մարտի

Անցեալ օր Բաթում վերադարձաւ Վարդան Մինդալեան, որ բերդապետ Լ. . .-ի թոյլտուութեամբ անցեալ փետրուարի 17-ին մեկնել էր Խոտրջուրի շրջանը հայերի, աւելի շուտ՝ իր ազգականների ու ընտանիքի մասին որոշ տեղեկութիւններ հաւաքելու համար։ Նա շրջագայել է հետեւեալ գիւղերը՝ Մելօ, Դանիլէթ, Սարինգօլ, Վերվանկէտ, Փիտերիկ, Կիսկիմ, Օշնախ, Կուտրաքէն, Կարմրիկ, Օսէվան, Կռման, Ջիջաբաղ, Սուենից, Քեղմուս, Վանքաճակերտ, Կաղմդուս, Բալչա, Խնդաձոր, Միջին թաղ, Կիսակ, Խաժար, Գեղնաձոր և Մասրուդ (ընդգծած գիւղերը հայկական են)։

— Այս գիւղերից շատերը այժմ դատարկուած ու անմարդաբնակ են դարձել, պատմում է պ. Մինդալեանը։ Խելագարի նման այս ու այն ձորին, հովիտին, սարին էի ականջ դնում, սակայն ոչ մի ձայն։ Երկար թափառելուց յետոյ, վերջապէս, Հունուտ գիւղում հանդիպեցի Ալի-բէյ անունով մի անձի, որի մօտ գտայ երեք հայ պատանիներ՝ Գէորգ Մուրադեան (15 տարեկան), Երուանդ ու Մինաս Գէորգեանները (երկուորեակ եղբայրներ 13 տարեկան) և Էլիզա անունով մի հայ կին (Բօրօղլի Յովհաննէսի աղջիկը)։ Մեր անսպասելի հանդիպումը այդտեղ աննկարագրելի է և վեր մարդկային զգացումից։ Հայերի կրած անլուր տանջանքների մասին սոսկալի բաներ պատմեցին։

Յիշեալ երեք պատանիներին և Էլիզային ազատողը եղել է Ալի-բէյը, որը իր ով լինելը կամ ինչպիսի պաշտպանութիւն ցոյց տուած լինելը հայերին ապացուցանելու համար ցոյց է տալ հետեւեալ բովանդակութեամբ յանձնարարական նամակը գրուած 12 օգոստոսի 1915 թ., որը առաջ եմ բերում անփոփոխ. «Իսպիր նահանգի Հունուտ գիւղացի օսմ. հպատակ Ալի-բէյի յանձէն կը վկայեմ վասն բարեկամութեան և մերթ օգնող հանդիսացանէ մեր նեղութեան և կարիքի ժամանակ, որոյ աղագաւ կը յանձնարարեմ ամենայն քրիստոնեայ եղբայրց ի դէպ վտանգի պաշտպանել զայն իւր բարի ընկերներով և գերդաստանով հանդերձ։ Որով յուսանք մեր քրիստոնէական պարտքի կատարում խղճի անդորրութեամբ կը մեկնենք յանձնարարելով զինքը վերջնոյ բարեկամութեան։ Խոտրջուրի բնակիչք՝ Մելքոն Ճանըգեան, Միլիտոս Տէր-Յովհաննիսեան, Քերոբ Զախալեան, Յարութիւն Ղարաղազեան, Քերոբ Բալքեան, Սերոբ Հիրօզեան, Փօղոս վարդապետ Գարագաշեան, Յակոբ Դմուրզեան, Սերոբ Քէչէչեան»։

Այդ նամակը ցոյց տալուց յետոյ, ահա թէ ինչ է պատմել Ալի բէյը.

— Յունիսի 7-ին Պոլսից հրաման եկաւ Խոտրջուրի հայերին նոյնպէս տեղահան անելու և դէպի երկրի ներսը քշելու մասին։ Կիսկիմի գայմագամ Մուստաֆա բէյ Ահմէդ Չաւուշ-օղլին այդ հրամանը անմիջապէս չիրագործեց, ենթադրելով որ մի գուցէ յետագայում փոխւի։ Նա որոշ չափով բարեացակամ վերաբերմունք ունեցաւ դէպի հայերը, սակայն այդ նոյն հրամանը յուլիսի 2-ին կրկնւելով՝ այս անգամ արդէն վճռականը փոխւեցաւ ու հրամանը արձակւեց և մի ամսւայ ընթացքում հայ գիւղերը դատարկւեցան. 812 հոգի (կին, երեխայ, ծեր) մէկէն ժողովեցին և քշեցին Ղասաբա (Սպերի շրջ.) երկու գայմագամի հսկողութեամբ։ Ճանապարհին այդ թշւառների թիւը աւելացաւ։ Բաբերդում երկու վալիով և 118 ասկեարով կազմը ուժեղացրին՝ ուղղութիւն բռնելով դէպի Երզնկա։ Հարկաւ երեւակայել կարելի է այդ «ճանապարհորդների» դրութիւնը։ Խոտրջուրից մինչև Երզնկա ճամբին 127 հոգի մեռաւ։

Բաղդուսում (Բաբերդի շրջ.) սպանեցին յայտնի վաճառականներ՝ Մելքոն Դարբինեան, Մկրտիչ Մաչուբեան, Ստեփան վարդապետ Զաքարեան, Յովսէփ վարդապետ Գարագաշեան, Թադևոսեան վարդապետ, Անանաս վարդապետ Յունանեան և Վահան վարդապետ Բուչարեան։

Անցեալ յունուարի 28-ին Զեյլէն գիւղում սպանւել է վաճառական Դանիէլ Սողքատեան, որը երկար ժամանակ պահւել էր Կուկուլ Մեհիդի տանը, սակայն մատնւելով գտնւել, սպանւել է. խիստ պատժի է ենթարկւել «գեաւուրին» հովանաւորող Կուկուլը, որովհետեւ հրահանգւած էր ոչ մի հայի չպահել, չպաշտպանել։

Նոյն Ալի-բէյի պատմելով, Բաշհամշէնցի Բեգրա անունով մի տաճիկ, խաբելով Տէր-Ամբրոսիոս վարդապետին և Մկրտիչ Մաչուբեանի գերդաստանին, տանում է դրանց Զիչեանօ սարը թաքցնելու պատրւակով և առնելով իր այդ «ծառայութեան» համար 178 ոսկի, վերջը բոլորին էլ սպանել է տալիս։

Պ. Մինդալեանը Խոտրջուրի հետեւեալ հայ գիւղերի մասին պատմում է.

1) Ջիջաբաղ գիւղը աւերակ է ու անմարդաբնակ. աւերւած է եկեղեցին. տներից շատերը հրդեհւած են։

2) Բալչա գիւղում աջարացի գաղթականներ կան, որի շնորհիւ «կենդանութիւն» է տիրում։

3) Կռմա գիւղը նոյնպէս աւերւած է, եկեղեցին այրւած, տները կիսափուլ, անմարդաբնակ։

4) Սուենից գիւղը նոյն դրութեան մէջ է, եկեղեցին նոյն վիճակին ենթարկւած։ Գիւղում կան աջարացի գաղթականներ։ Այս գիւղի շրջակայքում մինչև 13 հոկտ. 1915 թ., թաքնւած ապրելիս են եղել 25 հայ կին, երեխայ և տղամարդ, սակայն նոյն աջարացիների ցուցմունքով դրանց գտել ու բնաջնջել են. սպանւած տղամարդկանց մէջ եղել են՝ Կարապետ Դինդինեան, Յակոբ Յուլինեան և Կարապետ Կուրօղլեան։

5) Քեղմուս, 6) Վանքաճակերտ, 7) Ազդաղուս, 8) Միջին թաղ, 9) Խնդաձոր և 10) Կիսակ գիւղերը նոյնպէս աւերւած դրութեան մէջ են, եկեղեցիները այրւած, տները հրդեհւած և անմարդաբնակ։

Պ. Մինդալեանը մի քանի կտոր ժամագիրք, այս ու այն տեղ գտած, բերել յանձնել է բաթումաբնակ խոտրջուրցի Յովհաննէս Սանոսեանին պահելու համար։ Հետը բերել է նաև 6 տղայ Զինճաչոր գիւղացի (Սպերի շրջ.)։

Amiko

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԼԽ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՇՏԱԲԻՑ

22 մարտի

Արեւմտեան ճակատ. — Ջրերի վարարումը շարունակւում է։ Գերմանացիները շարունակում էին Իկսկիւլի նախակամրջի ամրութեան ռմբակոծութիւնը ծանր ու թեթեւ թնդանօթներով։ Գեն. Էւերտի զօրաճակատում էական ոչինչ չի պատահել։ Թշնամու օդանաւները շատ տեղերում թռչում էին մեր զօրքերի վրայ։ Լեախովիչի աւանում նրանք 9 ռումբ նետեցին։ Օլիկից դէպի հիւսիս արեւելք, Բոգուսլաւկա և Իսրախլիկի գիւղերի շրջանում յետ մղւեց թշնամին, որ փորձում էր մօտենալ մեր խրամատներին։ Թշնամու օդանաւերը ռումբեր նետեցին Ռաժնիի և Սարնիի վրայ։ Կրեմենեցի հիւսիս-արեւմտեան կողմը, Սանդպանովի շրջանում, թշնամին մեր խրամատների առջև պայթեցրեց երկու ական, բայց չկարողացաւ տիրել գոյացած փոսերին։ Թշնամու յարձակումը Տարնոպոլի արեւմտեան կողմը երկաթուղու շրջանում յետ է մղւած։ Բոյանից դէպի հիւսիս թշնամին

ՍՈՒԷՏԻՈՅ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿՌԻՒԸ*)

Չորրորդ ընդհարում.— Յաջորդ առաւ., օգոստ. 16-ին թշնամին կը կրկնէ իր յարձակումը, աւելի մեծ թափով և կատաղութեամբ։ Փողերը կը հնչեն, «մըրչ»-երը կը գոռան, ռումբերը կրակ կը տեղան անդադար։ Կէսօրէն յետոյ թնդանօթները կը յաջողին կիսովին քանդել հայերու գլխաւոր պատնէշները։ Հայերը կը ստիպուին, այդ պատճառով, ձգել այդ պատնէշները և բլուր մը պարպելով ետ քաշուիլ։ Թիւրքերը քաջալերուած, աւելի կատաղօրէն առաջ կը վազեն, կը մօտեցնեն թնդանօթները և կը յաջողին մինչև զօրանոցին (հայոց) առջևը և ժողովուրդին վրայ ռումբ ու գնդակ տեղացնել։ Պէտք կըլլայ զօրանոցը պարպել ու ժողովուրդը հեռացնել։ Կռուողներն ալ ետ կը քաշուին և դիրք կը բռնեն ձորի մը միւս կողմը գտնուող իրենց վերջին պատնէշներուն ետին, որոնք խիստ լաւ ծածկուած էին։—Քիչ յետոյ թիւրք բանակը, անցնելով հայոց նախկին դիրքերուն վրայէն, իր յաջողութենէն գինովցած և ապահովուած, կը մտնէ ձորին մէջ։ Կռուողները կը ձգեն որ մօտենան անոնք, և յանկարծ ամենքը մէկէնց դժոխային կրակ մը կը բանան։ Թնդանօթաձիգներուն բոլորն ալ կը սպանուին, կը սպանուի նաև հրամանատարը, հարիւրապետ Հիւսէյին էֆէնտի և վայնասունը կը բարձրանայ բանակին մէջ։ Խուճապը կատարեալ կը դառնայ, երբ Սուէտացի քաջերը յաջող կերպով քանի մը ձեռնառումբ կը պայթեցնեն թիւրքերու գլխուն և անոնց բանակը չարաչար պարտութեան մատնուած բուռ մը հերոսներու կողմէ, փախուստի կը դիմէ։

Թիւրքերը այդ օրը կուտնեն մօտ 150 մեռեալ, 200-ի չափ վիրաւոր, և հայոց ձեռքը կը ձգեն 7 մաուզեր հրացան և 3000 փամփուշտ։ Անոնցմէ դուրս թրքական բանակը 500-ի չափ կորսուած կունենայ (կը խորհուի թէ այդ 500 հոգին իրենց տուները փախած ըլլան սարսափահար)։

Չինգաղար.— Օգոստոս 15-ի և 16-ի մեծ ընդհարումներէն յետոյ, որոնց միջոցին թիւրքերը տուած են 1,000-է աւելի մեռած, վիրաւոր և կորսուած, կը ստիպուին դադրեցնել յարձակումները և մինչև սեպտ. 9 չեն համարձակիր նոր յարձակում գործել։

Այդ միջոցին Սուէտիացիք կը սկսին արտաքին օգնութեան մը վրայ խորհիլ, որովհետեւ իրենց ռազմամթերքը և ուտելիքի պաշարը հատնելու վրայ ըլլալով, պարզ էր որ յաւիտեանապէս չէին կրնար դիմաւորել իրենց լեռներուն վրայ։

Ուտելիքի խնդիրը որոշ չափով կը կարգադրեն 100-ի չափ կտրիճ երիտասարդներ՝ խումբերու բաժանուած շրջակայ թիւրք գիւղերը տարուելով և կողոպտելով։ Իսկ արտաքին օգնութիւն մը ձեռք բերելու համար նախ Տամլաճըքի ծովահայեաց բարձրութեան վրայ հսկայ ճերմակ դրօշակ մը կը կանգնեն՝ մէջ տեղը կարմիր խաչով մը և անոր մօտն ալ ուրիշ նոյնքան հսկայ դրօշակ մը՝ վրան գիտակով հեռուէն կարդացուելու չափ խոշոր տառերով գրուած՝ «Մենf ճայ ենf, օգնեցէ'f մեզի»։ Այս դրօշակներուն մօտ և ծովեզերքը կը դնեն պահակներ՝ իրենց մօտ ունենալով անգլիերէն լեզուով պատրաստուած խնդրագիր մը՝ որը պիտի աշխատէին հասցնել առաջին հանդիպած մարտանաւին։

Տեսնելով որ Սուէտիոյ առջևէն մարտանաւեր չեն անցներ, կռուողները երկու անգամ կը յաջողին մարդ ղրկել, զինուորական շղթան կտրելով, մինչև իսկ Իսկէնտէրուն, տեսնելու համար, որ հոն մարտանաւեր չկա՞ն և ըլլալու պարագային՝ աշխատելու համար անոնց հետ յարաբերութեան մտնել։

Գնացողները երբ յուսահատ կը վերադառնան, Սուէտիացիք այս անգամ կը մտածեն Կիպրոսի հետ յարաբերութեան մտնել (մերձաւոր եղերքը մօտ 70 մղոն հեռաւորութիւն ունի թրքական ափերէն), և այդ նպատակով կը ձեռնարկեն լաստափայտի մը շինութեան։

Բայց լաստափայտին շինութիւնը դեռ չաւարտած՝ ծովուն վրայ կերեւայ ֆրանսական ազատարար շոգենաւը, Կիշէն զրահաւորը, որ Կարմիր Խաչը և միւս դրօշակը հեռուէն նշմարելով կը մօտենայ Սուէտիոյ ափերուն, և յարաբերութեան կը մտնէ պատգամաւորներուն հետ (սեպտ. 5)։

Հետաքրքիր էին հպարտ սուէտիացիներու խնդիրքները, որոնք փոխանակ «ի սէր Աստուծոյ մեզի ազատեցէք» ըսելու կը խնդրէին՝

1) Իրենց տալ պէտք եղած զէնքը, ռազմամթերքը և ուտելիքը՝ որպէս զի կարողանան մնալ իրենց սիրական հայրենիքին մէջ և շարունակել իրենց կռիւը։

2) Հակառակ պարագային (բայց հակառակ պարագային միայն), փոխադրել զիրենք ազատ վայր մը։

Guichen-ի նաւապետը կը համակրի այդ քաջերուն, կը խոստանայ պէտք եղած զինամթերքը կատարել և իր իսկ պատասխանատուութեան տակ և հայերու ցուցմունքով կը ռմբակոծէ Քէպուսիէ գիւղը՝ ուր թիւրք կառավարութիւնը իսլամ մուհաճիրներ լեցուցած էր, լեզապատառ փախուստի մատնելով զանոնք։

Անթել հեռագրով Guichen տեղեկութիւն կուտայ Բօռ-Սայիտի ծովակալութեան, որ յաջորդ օրը կուգայ և կը մեկնի Կիպրոս՝ սուէտիացիներու տեղափոխման համար պէտք եղած բանակցութիւնները վարելու։

Հինգերորդ ընդհարում.—Քէպուսիէի ռմբակոծումը որոշ կերպով ցոյց կուտայ թիւրք իշխանութեանց, թէ հայերը յաջողած էին յարաբերութեան մտնել մարտանաւերու հետ։ Այդ պատճառով կառավարութիւնը կորոշէ վերջին փորձ մը ընել, խորտակելու համար հայերու դիմադրութիւնը և սեպտ. 9-ին, անձնատուութեան զուր հրաւէրէ մը յետոյ, արաբներու և պաշի-պոզուքներու հսկայ բանակ մը, իրենց հետ ունենալով կանոնաւոր բանակը, Գապաքլըի և Շէյխ-Եուրտուի կողմէն կը յարձակին կատաղօրէն։ Հայերը թոյլ կուտան որ անոնք յառաջանան մինչև այն կիրճը՝ որուն ետին անառիկ պատնէշներ շինած էին իրենք և յանկարծ խիստ մօտէն կրակ կը բանան անոնց վրայ՝ մահ սփռելով անոնց շարքերուն մէջ։ Թիւրքերը շփոթած երբ կը սկսին ետ քաշուիլ, մեր քաջերը դուրս կուգան իրենց պատնէշներէն և գրոհ կուտան թշնամիին վրայ ու կը հետապնդեն զանոնք մինչև Գապաքլը։

Կռուի ընթացքին Սուէտիոյ առջև կերեւան դարձեալ ֆրանսական զրահաւորները և առիթ կունենան աչքով տեսնալու հայոց դիւցազնական դիմադրութիւնը, որուն վրայ զմայլանքով կը պատմեն մինչև հիմա։

Ռմբակոծում.—Յաջորդ առաւօտ կանուխ (սեպտ. 10), ֆրանսական նաւատորմը կրակ կը բանայ թրքական դիրքերուն դէմ և հայերու ցուցմունքներուն վրայ կը ռմբակոծէ Լէվչիէն՝ քանդելով զօրանոցն ու քաղաքապետական շէնքը, Գապաքլըի թիւրք բանակատեղին և այլն, մեծ վնաս պատճառելով թշնամիին։

Այս ռմբակոծման ընթացքին, երբ թիւրք զինուորները սարսափահար կը փախչէին, հայերն ալ վերէն հրացանի կը բռնեն զանոնք և կը հալածեն՝ կոտորելով անոնցմէ շատերը։

Վերջին ընդհարում.— Սեպտ. 11-ին հայ պահակները իմաց կուտան, որ թշնամին նոր յարձակման պատրաստուելու համար կը համախմբուի։ Առանց սպասելու թիւրքերու յարձակողականին, հայ կտրիճները քաջալերուած իրենց նախկին յաջողութիւններէն և նաւատորմի ներկայութենէն, իրենք նախայարձակ կը հանդիսանան, գրոհ կուտան անակնկալի թափով մը Եօղուն-Օլուքի վրայ, կը կոտորեն ու փախուստի կը մատնեն թշնամին՝ վանելով զայն իրենց սահմաններէն։

Այս ընդհարումը վերջինը կըլլայ ու կը փակէ Սուէտիոյ պայքարի փառաւոր պատմութիւնը, որովհետեւ յաջորդ օրը, սեպտ. 12, ֆրանսական ծովակալը պէտք եղած արտօնութիւնը կը ստանայ, Եգիպտոս փոխադրելու համար սուէտիացիները ամբողջ։

Ազատում.— Սեպտ. 12-ին ուրեմն, ֆրանսական 5 մարտանաւեր կը շարուին Սուէտիոյ առջև և իրենց սատա-

*) Տես «Հորիզոն» № 66.

նոյնպէս երկու ական պայթեցրեց իր խրամատների առջև, բայց փոսը գրաւելու համար նրա առած փորձը անաջող անցաւ։

Կովկասեան ճակատ.—Մարտի 20-ի կռիւների մէջ մենք գերի վերցրինք հայկական ռազմաբեմը նոր եկած թիւրքական գնդերից մէկի կազմին պատկանող դարձեալ երկու վաշտ լիակատար կազմով։ Մուշ-Բիթլիսի շրջանում մենք առաջ ենք շարժւում հարաւ-արևմտեան ուղղութեամբ։

—

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 22 մարտի.—Պաշտօնական Գուարդիական հեծելազօրի մէջ ծառայող, 8-րդ բանակի հրամանատար գեներալ-ադիւտանտ, հեծելազօրի գեներալ Բրուսիլովը նշանակւում է հարաւ-արևմտեան բանակների գլխաւոր հրամանատար, թողլով գեներալ-ադիւտանտ։

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 22 մարտի.—Կարմիր խաչի գլխաւոր վարչութիւնը Կովկասեան բանակի գլխաւոր լիազօր Գոլուբևովից հեռագիր է ստացել, որի համաձայն, ըստ լրացուցիչ տեղեկութիւնների, «Պորտուգալ» նաւից 158 ազատուածներից դուրս ազատուած են դարձեալ 13 ֆրանսիացի նաւաստիներ և 9 ռուս սանիտարներ, նաւապետի օգնական Բերգան և ուսանող Պոգնանովը։ Ֆրանսիացի բժիշկ Բնչանը «Պորտուգալ»-ի խորտակման ժամանակ պատահմունքով նրա վրայ չէր գտնւում։

ՅԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 22 մարտի.—Բեռլինից հաղորդում են, որ Թիւրքաց ընդհանուր հրամանատարը ծանուցանում է 1896 թւին ծնւած բոլոր թիւրքահպատակների և Երզրումի ու Սըւազի վիլայէթների 1897 թւին ծնւած բնակիչների զինուորի մասին։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ

ՓԱՐԻԶ, 21 մարտի. — Երեկոյեան հաղորդագրութիւն։ Սուասոնի և Ռէյմսի միջև մենք կենտրոնացած կրակի ենթարկեցինք Բիւթ անտառից և Մոնտէ—Սաղինէկից հիւսիս գերմանական բանակավայրերը։ Արգոններում մեր մարտկոցները կատաղօրէն ռմբակոծեցին Աւոկուր անտառի արևմտեան անկիւնն ու թշնամու բլոկհաուզը, որ քանդւեց. ընդ սմին, կրակը ռումբերի մթերանոցի պայթում առաջացրեց։ Մաասից արևմուտք գերմանացիներն երեկ ցերեկւայ վերջին ուժեղ գրոհ տւին Օկուրի և Բէտանկուրի միջև Ֆորժ վտակի աջ ափին մեր դիրքերի դէմ, որ պարպել էինք մենք և ձախ ափն էինք փոխադրել մարտի 19-ի գիշերը, այնպէս որ թշնամին այն ժամանակ չէր նկատել այդ։ Մեր նոր դիրքերի սաստիկ կրակով և Բէտանկուրից կողքի ռմբակոծութեամբ թշնամու զօրքերը խոշոր կորուստներ կրեցին՝ առանց նոյնիսկ մասնակցելու ճակատամարտին։ Այսօր տեղի էր ունենում բաւական կատաղի ռմբակոծութիւն Բուաբուրբըի շրջանում, իսկ հետևակազօրի կռիւներ չեղան։ Մաասից-արևելք մեր հակայարձակումներն աջողապէս շարունակւում էին, որով մենք ցերեկւայ ընթացքում թշնամուն վա

Նեցինք դէպի Կուլէտ անտառի հիւսիսային մասը, Վօի մօտ աւազանից դէպի հիւսիս։ Վերջին հակայարձակումը, որ առանձնապէս ուժեղ բնոյթ ունէր, մեզ հնարաւորութիւն տւեց կրկին գրաւելու Վօ գիւղի արևմտեան մասը, որը մենք նախապէս պարպել էինք։ Վեօվրում տեղի է ունենում արտիլերիական ուժեղ կռիւ Մուլենվիլ հատւածում։ Անցած գիշեր մի «ցեպպելին» կողմից կատարւած Դիւնկերկի վերջին ռմբակոծութեան իբր հատուցում, դաշնակիցների մօտ 30 օդաչուներ 83 մեծ ռումբ ձգեցին Նէյլէմի, Էրսսենի, Տերհասի և Գուտտլատի թշնամու բանակավայրերի վրայ։ Մարտի 21-ի գիշերը մեր օդային նաւախմբերից մէկը ռմբակոծեց Կոնֆլանի կայարանը։ Ցերեկով մեզ համար աջող բազմաթիւ օդային կռիւներ տեղի ունեցան։ Վերդէնի շրջանում մեր օդաչուները ջախջախեցին 4 գերմանական ապարատ. թշնամու Թափած ապարատները նրանց կողմից փախուստի մատնեցին կամ բռնւեցին ցած իջնել։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 22 մարտի.— Գերմանացիները անձնային չտապողականութեամբ գիշեր ու ցերեկ ուժեղացնում են բելգիական սահմանի պաշտպանութիւնը, վախենալով որ անգլիացիները կը փորձեն դեսանտ իջեցնել Ֆլանդրիայի հիւսիս-արևելքում։ Արևմտեան Ֆլանդրիայից պարպւել է համարեա ամբողջ խաղաղ բնակչութիւնը։

ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

ՍԱԼՈՆԻ, 21 մարտի.— Գևգելիի և Դոյրանի շրջանում թնդանօթաձգութ է տեղի ունենում։

ԾՈՎԻ ՎՐԱՅ

ԼՈՆԴՈՆ, 21 մարտի. — Ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերը «ցեպպելիններ»-ի յարձակման առաջացրած անօրինակ տպաւորութիւնը, մի ստահակ տեղեկացրեց գերմանացիների չարագործ արարքը Սև-ծովում։ Թերթերը ալիսեն «Պորտուգալ»-ի ընկղմելու լուրը հաղորդող հեռագիրը համարեա առանց մեկնաբանութիւնների։ «Դէյլի Քրոնիկլ» ասում է. «Հիւանդանոցնաւի ընկղմումը ոչնչութիւն է գերմանացիների կողմից չարագործութիւններն անընդհատ կրկնումը բթացրել է մարդկութեան տպաւորւելու զգացումը։ Այդ փաստը ցոյց է տալիս, թէ մինչև ինչ անհաւատալի սահմաններն է հասնում թշնամին՝ մարդասիրութեան սկզբունքները արհամարհելու մէջ»։

ՀՌՈՄ, 21 մարտի.— «Մեսաջերօն» գրում է «Պորտուգալի» խորտակման մասին. «Ճաղաքակիրթ մարդկութիւնը, որ ցնցւում է, քանի անգամ մի նոր գերմանական կուլտուրայի կատարած վայրագութիւնները տեսնելով, չի ապշիլ նոր ոճիրի վրայ, որ հարկաւ առիթ կը ծառայէ, որպէս զի Վիլհելմը Երկաթեայ Խաչով պարգևատրէ սուզանաւի հրամանատարին, ինչպէս այդ պատահեց «Լուզիտանիայ» խորտակման ժամանակ։ Չկայ այնպիսի մի բարբարոս վայրագութիւն և այնպիսի մի ամօթալի ոճիր, որի առաջ Գերմանիան վարանէր։ Ոճիրներն իրար են յաջորդելու—եղանակն նոյն անասնական վայրագութիւն»։

ԹՈՒՐՔԻԱ

Թեան բանակը, կասեցնելով Իպրի, Արրասի, Ռէյմսի և Վերդէնի իր առաջխաղացման մէջ, զրկւած լինելով առաջանալ Բալկաններում, յուսալքւելով Ասիայում, հիւի Ջրանցքում փակւած իր նաւատորմիղով—գերմանական գաղանը յարձակւում է ամէն մի որսի վրայ։ Մենք երբեք չենք ապշած, սակայն զգում ենք, որ քաղաքակրթական ու մարդասիրական բարձր պարտականութիւն ենք կատարում՝ պահանջելով վրէժ մինչև վերջին սահմաններն ու այնպիսի պատերազմ, որ ապահովէ իրաւունքի պաշտպանների լիակատար յաղթութիւնն ու Եւրոպան և ամբողջ մարդկութիւնն ազատէ իրաւունքի բռնաբարումից»։

ԼՈՆԴՈՆ, 21 մարտի.— Լլոյդը հաղորդում է սուզանաւի կողմից անգլիական «Բենգրեն» բեռնակիր նաւի ընկղմելու մասին։ Մարդկանցից մի մասն ազատւել է։ Նաւը զինւած չէր։

ՕԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԼՈՆԴՈՆ, 21 մարտի.—Պաշտօնապէս հաղորդւում է, որ ընդամենը 6 «ցեպպելիններ» էին մասնակցում անցեալ գիշեր կատարւած թռիչքին։ Երեքն ուղղւեցին դէպի Սկովտիայի հարաւ-արևելեան կոմսութիւնները, մէկը Անգլիայի հիւսիս-արևելեան ծովափը և վերջին երկուսը Անգլիայի արևելեան կոմսութիւնները։ Սկովտիայի վրայ թռչող օդանաւերը ծովեզրն անցած երեկոյեան 9 և 10. 30 ժամերի միջև և ծովեզրի վրայ մնացին մինչև գիշերւայ ժամի 1-ը։ Ընդամենը 36 պայթուցիկ և 17 հրդեհածիգ ռումբեր ձգեցին զանազան վայրերում՝ վնասելով մի քանի հիւրանոցներ ու բնակարաններ։ Ինչքան հնարաւոր եղաւ պարզել մինչև հիմա, Սկովտիայի վրայ թռիչքի ժամանակ սպանւած են 7 տղամարդ, 3 երեխայ. վիրաւորւած են 5 տղամարդ, 2 կին և 4 երեխայ։

ԼՈՆԴՈՆ, 23 մարտի.—Պաշտօնական հաղորդագրութիւն։ Անգլիայի հիւսիս-արևելեան ծովափի վրայ թռչող «ցեպպելինը» 22 պայթուցիկ և 15 հրդեհածիգ ռումբ ձգեց։ Երկու «ցեպպելիններ» շրջում էին արևելեան կոմսութիւններում՝ քանիցս ենթարկւելով տեղական թնդանօթների հրաձգութեան երեկոյեան ժամը 10-ից մինչև գիշերւայ ժամը 1-ը։ Այս ռմբակոծութեան պատճառով նրանք հնարաւորութիւն չունեցան տեղ ընտրել ռումբ ձգելու համար։ Ձգելով 33 պայթուցիկ և 65 հրդեհածիգ ռումբեր, նրանք վնաս չպատճառեցին։

ԲԱԶԵԼ, 21 մարտի.—Գերմանացի 2 օդաչուներ մարտի 18-ին 4 ռումբ ձգեցին Նորենբերգի քաղաքի վրայ՝ վնասներ պատճառելով։ Այդ երրորդ դէպքն է, որ գերմանացի օդաչուները ռումբեր են ձգում Շւեյցարիայի տերիտորիայի վրայ։ Դաշնակցական խորհուրդը բողոք յայտնեց Բերլինում։

ՀՌՈՄ, 21 մարտի.— Պաշտօնական հաղորդագրութիւն։ Ցերեկով Անկոնայի վրայ թշնամու 5 հիդրոպլաններ երևացին, որոնց ընկերակցում էին բաց ծովում մնացած երկու ականակիրներ։ Մեր թնդանօթների և 4 աէրոպլանների կողմից յարձակւած կրակով հիդրոպլանները յետ դարձան՝ 3 ջախջախւելով։ Սրանցից մէկն ընկաւ ծովը և գերի վերցւեց, միւսը ծովն ընկնելով այրւեց, երրորդն ընկղմւեց նաւահանգիստ բերելու ժամանակ։ Թռիչքից առաջացած նիւթական վնասներն աննշան են։ Ազգաբնակութիւնից 3 հոգի սպանւեց և 11 հոգի վիրաւորւեց։

ՌՈՒՆԳԱՐԻԱ

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 21 մարտի.— Բուդապեշտից հաղորդում են, որ մեծ ցոյցեր են տեղի ունեցել հացառութեան օրերին։ Ռնգարական մամուլը լռութիւն է պահպանում։ «Ցէյտ»-ը մի քանի տող է նւիրում։ Լրագրական մի գործակցութեան մէջ յայտարարութիւն էր փակցւած, թէ հացառութեան մասին բանակցութիւններ են սկսւած։ Այս տեղեկութիւնն էր առիթ տւել ցոյցերի, որոնց ժամանակ մեծ ծախսեր դժւարութիւններով էր միայն աջողւել կարգը պահպանել։

ՀՈԼԼԱՆԴԻԱ

ԼՈՆԴՈՆ, 21 մարտի. — Ռէյտերի գործակալութիւնը տեղեկացել է պաշտօնական աղբիւրից, որ Մեծ Բրիտանիայի կամ դաշնակիցների և Հոլլանդիայի յարաբերութիւնների մէջ տեղի չէին ունեցել այնպիսի փոփոխութիւններ, որոնցով կարելի լինէր հիմնաւորել Հոլլանդիայում առաջացած լուրերը՝ Պարիզում տեղի ունեցած խորհրդաժողովի պարագաների ժամանակ չի քննել Նիդերլանդի դէմ թշնամական գործողութիւններ սկսելու

հնարաւորութիւնը։ Այն լուրը, թէ դաշնակիցները քննել են հոլլանդական հողում զօրքեր ափ հանելու հնարաւորութիւնը, հիմք չունի։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 22 մարտի.—Հոլլանդական կառավարութեան ձեռք առած միջոցների վերաբերմամբ Ռոտտերդամից հաղորդում են, որ դեռ ևս անորոշութիւն է տիրում մասամբ։ Տրամադրութիւնն աւելի հանգիստ է, բորսան վստահ է։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՄՈՍԿՎԱ, 22 մարտի.—Պետրոգրադից Մոսկւա վերադարձաւ քաղաքագլուխ Չելնոկովը, որը Պետրոգրադում այցելել էր գեներալ Շուվաևին։ Զրուցատրութեան ժամանակ զինուորական մինիստրը շեշտել է, որ ինքը պետութեան բարօրութեան համար գործելիս պատրաստ է ձեռք ձեռքի տւած գնալ հասարակական կազմակերպութիւնների հետ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

—

Ալաշկերտի Ղարաքիլիսէից մեր Ողթակից երեկեանը հաղորդել էր մեզ («Հորիզոն» № 64), որ «Փոխարքայի գլխաւորած կից վիճակագրական բիւրօն մի քանի հայ երիտասարդներ է ուղարկել Տաճկահայաստանի գրաւած մասերում ցուցակագրելու հայ ազգաբնակութիւնը։ Հաւատի աղբիւրներից իմացայ, որ այդ ցուցակագրութիւնը տարւել է վերին աստիճանի անփոյթ» —աւելացնում է մեր թղթակիցը։

Մեր ստացած նոր տեղեկութիւնների հիման վրայ պիտի յայտնենք, որ մեր յարգելի թղթակիցը որոշ չափով սխալւել է։

Նախ՝ այդ երիտասարդները ուղարկւած են ոչ թէ փոխարքայական վիճակագրական բիւրօի կողմից, այլ Թիֆլիսի գաղթականական Կ. Կոմիտէից և հայ կազմակերպութիւնների կողմից, որոնց յանձնւած է եղել այդ գործը։

Երկրորդ՝ վիճակագրութիւնը դեռ չի վերջացած և նրա արժէքի մասին այժմեանից որոշակի կարծիք վաղաժամ պիտի համարել։

Եւ երրորդ՝ աւելի պայմաններում ցուցակագրութիւնը չի կարող զերծ լինել պակասութիւններից։ Ի հարկէ, ամէն մի նկատւած թերութիւն պիտի ուղղել և վերջնական արդիւնքը միայն կօգտագործւի իբրև նիւթ զանազան ձեռնարկութիւնների համար։

Սակայն վերջինս միայն գիննագործների պարտականութիւնը չէ։ Անչուշտ գինու Ռուսաստան ազատ արտահանումից և հետևապէս գնի բարձրացումից անմիջապէս կօգտւէին գինեգործները։ Բայց հենց այդ հանգամանքից անուղղակի կերպով կօգտւէին նաև այգեգործ գիւղացիք։ Դրանում համոզւելու համար պիտի յիշել անցեալ տարւայ աշնան 17/18-ի գիշերւայ այգիների ցրտահարութիւնը, որ անմխիթար դրութեան մէջ դրեց մեր այգեգործական շրջանների ազգաբնակչութեանը։ Վերջինս սպառում էր տնտեսական լիակատար քայքայում, եթէ չլինէր 1915 թւի ձմրան վերջին գինու գնի բարձրացումը, որի շնորհիւ խաղողի գինը եռապատկեց՝ ապրուստի բաւարար միջոց տալով գիւղացուն։

Ահա այդ բոլոր հանգամանքներն ի նկատի ունենալով, մեր գինեգործներն ու հասարակական ուժերը պիտի աշխատեն կառավարութեան վերոյիշեալ կարգադրութեան վերացման համար, ինչպէս այդ արւեց Բեսարաբիայում։

Ե. Մանուկեան

ԳԻՆՈՒ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԻՔԸ

—

Գաղութին և մայր երկրին յատուկ այն կապից, որ կայ Անդրկովկասի և Ռուսաստանի միջև, ներկայ պատերազմի օրերում մենք չենք տածում այնքան, որքանի նկարագրութիւնը ամէն օր կարդում ենք լրագրներում, թէ շատ թանգ են կամ չեն ճարւում շաքար, ապակեղէն, ճոթեղէն և այլ ֆաբրիկատներ ու հում նիւթեր։ Մենք ոչ միայն տուժում ենք Ռուսաստանից ներմուծւած ապրանքների թանգութիւնից, այլ որ գլխաւորն է, նաև մեր երկրից արտահանած նիւթերի գների անկումից, մասամբ հաղորդակցութեան միջոցների անկանոնութեան և մասամբ էլ այս ու այն պաշտօնեայի կարգադրութեան պատճառով։ Բամբակի մասին գրել եմ արդէն («Հորիզոն», ս. թ. № 10)։ Այժմ պիտի խօսեմ գինու մասին։

Գինու վաճառքը առայժմս բոլորովին կանգ է առել։ Չնայած Ռուսաստանում վեդրոն ծախւում է 20 ռուբլով, այն ինչ մեր գինեգործական շրջաններում տասնեակ հազարաւոր վեդրոներով անշարժ է մնում գինին ամբարներում։ Դրա պատճառը միմիայն հաղորդակցութեան միջոցների անկանոնութիւնը չէ ի հարկէ։ Այս հանգամանքը քիչ նշանակութիւն կարող է ունենալ գինու վաճառքի համար։ Գինու այդօրինակ անշարժութեան գլխաւոր պատճառը այն Ռուսաստան արտահանելու արգելումն է կառավարութեան կողմից։

Բայց այդ արգելման խնդրում պարզ երևան է գալիս մեր գինեգործների անկազմակերպ վիճակը։ Մինչդեռ Բեսարաբիայից եղան բազմաթիւ դիմումներ գինու ազատ արտահանման համար, որը ի վերջոյ թոյլատրւեց— մեր գինեգործները տեղերից էլ չեն շարժւում։ Նոյն բանը եղաւ նաև բամբակի վերաբերմամբ։— Անդրկովկասի բամբակագործների համար մի ազնիւ պարտադիր որոշման դէմ ոչ մի դիմում չարւեց առևտրի և արդիւնաբերութեան մինիստրին, որի պատճառով և մեր բամբակաբուծական շրջանները կրեցին հսկայական վնաս յօգուտ միջնորդների, քանի որ այժմ սակագինը վերացւած է, և օր օրի վրայ բարձրանում է բամբակի գինը, 1 ռ. 60 կոպէկից (չմաքրւած լիտրը) բարձրացել է այժմ 2 ռ. 10 կ. և հաւանաբար կը բարձրանայ մինչև 3 ռ.։ Բամբակի սակագնի վերացումը և Բեսարաբիայի գինեգործների դիմումը պիտի օրինակ ծառայի մեր գինեգործներին համապատասխան դիմումներ անելու։

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Երևանի փախստականների յանձնաժողովի կողմից Թիֆլիս են եկել Ղ. Խանեան, Ա. Մաքսապետեան և Հմ. Մանուկեան, որոնք բերել են Վասպուրականի վերաշինութեան վերաբերեալ մանրամասն ծրագիր ներկայացնելու մեր հասարակական կազմակերպութիւններին ու մարմիններին և միևնոյն ժամանակ դիմումներ անելու, որպէս զի երկիր վերադարձողներին դիւրութիւններ տրւեն օր առաջ գարնանացանքը սկսելու։

✦ Կովկասեան ռազմաբեմի գաղթականական գործերի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշեը դիմելով զինուորա-հաղորդակցութեան տան կառավարչին, խնդրել է, որ վերջինս կարգից դուրս վագոնի «նարեաղներ» տայ Էջմիածնից Ալէքսանդրապոլ եկած 120 փախստականներին բերել տալու համար։

✦ Քաղ. Միութեան կոմիտէն միջնորդել է գեն. Թամամշեւին, որ սա Դիլիջանի և Հաֆթւանի փախստականների հիւանդանոցներին միանւագ յատկացնի 7,500 ռ. և իւրաքանչիւր ամիս 3,000 ռ.։

✦ Մարտի 21-ին, Հայոց Կենտրոնական կոմիտէի նախագահ Ս. Ցամուրճեանը գնաց Դիլիջան, ուր նա մտադիր է փախստականների համար պարէնի պահեստներ կազմակերպել։ Նոյն օրը կոմիտէն Մուշ ուղարկեց սանիտարական մի խումբ՝ բժ. Մանիշակեանի գլխաւորութեամբ, այնտեղի գաղթականներին բժշկական օգնութիւն հասցնելու համար։ Նոյն կոմիտէի լիազօրը Ալաշկերտի Ղարաքիլիսէից հեռագրում է, որ ներկայումս Մուշում կան 6000-ից աւելի գաղթականներ, որոնք մերկ են, քաղցած և հիւանդ։ Վերոյիշեալ կոմիտէն 300 ռ. է յատկացրել Արդահանի փախստականների համար կենսամթերք գնելու։

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Մարտի 22-ին Կովկասի Փոխարքային ներկայացան գեներալ-լէյտենանտ Տրամբիցկի, Բաքւի նահանգական ժանդարմական վարչութեան կառավարիչ փոխ-գնդապետ Սեներինովսկի, Ատրպատականի գլխաւոր հիւպատոսարանի կառավարիչ Դ. Բելեաև և կովկասեան շրջանային ինսպեկտոր պետական-խորհրդական Ա. Ի. Սլովենսկին։

✦ Քաղաքագլուխ Ա. Խատիսեանը, Մոսկւայից վերադառնալով, ունկընդրութիւն է ունեցել Կովկասի Փոխարքայի մօտ և մանրամասն զեկուցում է կարդացել Համառուսական Քաղաքների Միութեան IV-րդ համագումարի գործունէութեան մասին։ Կովկասի Փոխարքան, լսելով Խատիսեանի զեկուցումը, նրան պատասխանել է հետևեալ խօսքերով.

«Շնորհակալ եմ ձեզանից, որ դուք Մոսկւայում ձեր արած զեկուցման մէջ այնպէս պարզ կերպով պատկերացրել էք Կովկասեան բանակի հերոսական սխրագործութիւնները և շատ գոհ եմ, որ Համառուսական Քաղաքների Միութիւնը այդպէս ջերմագին գնահատեց նրա հարազատ աշխատանքը։ Ես գոհ եմ և այն բանից, որ դուք զգացել էք իմ չափազանց բարի ցանկութեան յարաբերութիւնը դէպի Քաղաքների և զեմստուային միութիւնները, որոնց ծառայութիւնները բանակի համար Ես տեսնում եմ ամէն օր և որոնց աշխատանքները շատ եմ գնահատում։ Վերջապէս Ինձ ուրախութիւն է պատճառում և այն, որ դուք Մոսկւայում ցոյց էք տւել Կովկասեան երկրի բոլոր ազգերի կարիքները, դէպի որոնք Ես վերաբերւում եմ բոլորովին հաւասար և որոնց կարիքները Ինձ հարազատ են և Իմ հոգսերի մշտական առարկան են։ Ես լիազօրում եմ ձեզ, որ իմ խօսքերը բառացի հաղորդէք Համառուսական Քաղ. Միութեան մէջ աշխատող այնտեղի և Մոսկւայի ընկերներին»։

✦ Մարտի 27-ին, Արքունական թատրոնում, հայազգի յայտնի երաժշտապէտ Ալ. Ա. Սպենդիարեանը կազմակերպելու է սիմֆոնիկ համերգ՝ բացառապէս իր երկերից։ Մեր տաղանդաւոր երաժշտագէտը առաջին անգամն է, որ Թիֆլիսում տալիս է համերգ. յոյս ունենք, որ հայ հասարակութիւնը իր ներկայութեամբ կը գնահատէ պ. Ա. Սպենդիարեանին և կը քաջալերէ նրա երաժշտական տաղանդը։

✦ Քաղաքների Միութեան Կովկասեան բաժանմունքի լիազօր Խատիսեանը, մօտ օրերս հրապարակային մի զեկուցում է կարդալու Մոսկւայում գումարւած և աւարտւած Համառուսական Քաղաք. Միութեան IV համագումարի ներկայացուցիչների աշխատանքների և որոշումների մասին։

✦ Ինչպէս անպատկառ աւտոբաւականները ամէն օր կենսամթերքների գները քմահաճօրէն բարձրացնում են, այնպէս էլ ջրկիրները օրինակ վերցնելով, վերջերս ջրի գինը բարձրացրել են. այս առթիւ բնակչութեան մի մասը դիմելով քաղ. վարչութեանը բողոքել է այդ բանի դէմ։ Քաղ. վարչութիւնը որոշել է այդ հարցը դումայ մտցնել և զեկուցանել, որ ջրկիրներին քաղ. ջուրը բաց թողնւի դոյլը 1 կ., իսկ ազգաբնակութեանը ձրի։

✦ Թիֆլիսի հրէական համայնքի ռաբբի Մարկուսը, հրէական զատկական տօնի առթիւ հրէաների համար ձեռք է բերել մօտ 500 փութ շաքար, բայց որովհետև շաքարի փոխադրութեան և այլ զանազան ծախքերը շատ թանգ են նստել, դրա համար էլ ռաբբի Մարկուսը դիմել է քաղաքային վարչութեանը և խնդրել, որ թոյլ տրւի իրեն շաքարը վաճառել սահմանւած սակագնից բարձր, այնքան, որքան ծախս է նստել իրեն։

✦ Մարտի 22-ին Շարիգախանի, Զուլֆա և Էջմիածին կայարաններից եկաւ № 7 սանիտարական գնացքը՝ լի վիրաւոր և հիւանդ զինուորներով, որոնց թւում 2 հիւանդ սպաներ, 3 գերի և վիրաւոր սպաներ և 6 հիւանդ ասկեարներ։ Ծանր հիւանդ և վիրաւոր զինուորները թողնւած են Նաւթլուղի զինուորական հիւանդանոցի տնօրէնութեանը, իսկ մնացեալները փոխադրւած են Բագու և Վլադիկաւկաս։

✦ Քաղաքների Միութեան Բաթումի և նրա շրջանի հաստատութիւնների և հիմնարկութիւնների գործունէութեան հետ ծանօթանալու համար նոյն շրջաններն են ուղարկւում իրաւաբան Թումանով և Նաւթլուղի զինուորական հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Ն. Մինասեանց։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ ՈՐԲԱՆՈՑ

Ալէքսանդրապոլ, 16 մարտի

Ալէքսանդրապոլի Եղբ. Օգնութեան կոմիտէի նախաձեռնութեամբ, մի ընդհանուր որբանոց բանալու գործ սկսւեց. առաջարկւեց բոլոր տեղական կազմակերպութիւններին, որոնք հետաքրքրւում են որբերի դրութեամբ և կը ցանկային օգնած լինել նրանց, գալ, միանալ կոմիտէի հետ, մի մեծ որբանոց բանալու համար. առաջ եկաւ միութիւնը «Հաւասարներին» սկզբունքով և որբանոցի հիմքը դրւեց։ Վարձւել է արդէն շէնութիւնն ու պատրաստւած են թախտերը։

—

ցած հրահանգին համաձայն կը հրաւիրէին ժողովուրդը նաւերը ապաստանիլ փոխադրւելու համար Եգիպտոս՝ թէև առանց խանդավառութեան, բայց սակայն, սուէտիացիք կը համակերպէին։

Նոյն օրն իսկ ամբողջ ժողովուրդը ծովափ կիջնէ ձորին մէջէն, դրահամուրներու կրակին և երկու կողմերը պաշտպանող հայ մարտիկներու հրացաններուն պաշտպանութեան տակ, և կը փոխադրւի զրահանաւերուն վրայ։

Ցաշորդ օրը կռւողները իրենք ալ նաւ կը նստին, մինչև վերջինը, իրենց հետ առնելով իրենց վառօդն ու զէնքերը և մարտանաւերը զանոնք կը փոխադրեն շիտակ Բոր-Սայիտ՝ ուր կը հասնին մէկ մասը մարտ. 14-ին և միւսները 15-ին։

Սուէտիոյ գաղթականները, թւով մօտ 4,100 հոգի (վերջնական մարդահամար մը չէ եղած տակաւին), գաղթակ ժամաւ Բոր-Սայիտի լազարէթին շուրջը, քաղաքէն էֆս ժամ ուշ, և տեղաւորւած են անգլիական, և անգլիական հրամանատարութեանց տրամադրած 450 կ. ֆրանսիական վրաններուն տակ։ Իրենց ուտելիքի հոգը, ինչպէս զինուորական իշխանութիւնները, ֆրանսական կառավարութեան հաշւոյն, իրենց վրայ առած են, իսկ հագուստեղէնի, հիւանդանոցի ու ուրիշ պէտքերն ալ Եգիպտոսի հայերը կը հոգան։

Կորուստներ.—Ընդհանրութեան ընթացքին թիւրքերը կորսնցուցած են 1,000-է աւելի մարդ, մեռած ու վիրաւոր, առանց հաշւելու վերջին ռմբակոծութեանց պատճառած կորուստները՝ զորս հաշւել կարելի չէ եղած ճշդել։ Իսկ հայերը տւած են ընդամենը 20 մեռեալ և 15 վիրաւոր։

Մեռողներուն մէջ կը գտնւին Ցովհաննէս Լըչեան և Ցակոբ Գարակէօզեան։

Այս վերջինին կորուստը արցունք խլած է բոլոր սուէտիացիներու աչքերէն, որովհետև, ինչպէս կը պատմէին, որովհետև տասնեակ տարիներ չեն ձեռ իրենց, տասնեակ տարիներ չեն ծնիր այդպիսի կորիւն մը։

Անաւասիկ թէ ինչ կը գրէ Կահիրէի «Արև»-ի մէջ պ. Մ. Տամատեան, անոր մասին.

«Այս ճակատամարտին մէջ նահատակւեցաւ Սուէտիոյ անձնուրացութեան (Վահրամը՝ Ցակոբ Գարակէօզեան (Վահրամ) բէֆ գիւղէն). կարելի էր Սուէտիոյ առիւծը կոչել զայն. շրջակայից թիւրքերն ու ֆելլահները կը դողային անոր անունէն»։

—

Այս տեղեկութիւնները քաղւած են Սուէտիոյ մեր՝ ընկերներէն և ճշտւած են չէզոքներու վկայութիւններով։

[illegible] Ընկերեան

Եգիպտոս, 18 նոյեմ. 1915

ահղաններն ու այլ իրերը. Երևի շատ մօտիկ ապագայում կը բացւի որբանոցը։ Բարեգործական ընկերութեան տեղական անդական ճիւղի վարչութիւնը նոյնպէս միացել է։ Ընդհանուր որբանոցին որոշեց միացնել և իր որբանոցը Ալէքսանդրապոլի Հայ Երիտ. Միութիւնը, որ ահա հինգերորդ ամիսն է՝ պահում է իր սեփական միջոցներով սկզբում 20, իսկ այժմ 30 որբ։

Որբեր շատ կան Ալէքսանդրապոլի շրջանում, բայց նրանց մասին մանրամասներ չկային։ Բոլորովին որբ երեխաների թիւը հաշւում են 200, իսկ որբ ընդարձակ մտքով հաշւում են մինչև 4—5 հարիւր։ Մինչև օրս խեղճերը քարշ էին տալիս իրենց գոյութիւնը բարեկամների մօտ, իսկ այժմ, երբ Ներգաղթը սկսել է և ոչ մի կերպ չի կարելի երկիր վերադարձողներին պահել, որբերի դրութիւնը փոխւում է։ Նրանց պահող բարեկամներն էլ են գնում, թողնելով խեղճերին բախտի քմահաճոյքին, անորոշ ու անօգնական դրութեան մէջ. աւելի ծանր է 3—5 տարեկան որբերի դրութիւնը, որոնք ոչ մի կերպ չեն կարող ապրել առանց խնամող ձեռքերի։ Այս բոլորն ի նկատի ունենալով, պէտք է գովել Ալէքսանդրապոլի Եղբ. Օգ. Կոմիտէի գործը, որ մէջտեղ գալով մի ընդհանուր միութիւն առաջ բերեց, այդ հարցի շուրջը որոշ ընկերութիւնների ու միութիւնների մէջ։ Բայց պէտք է այստեղ յիշել և այն, որ կոմիտէն որոշել է միայն 6-ից բարձր տարիք ունեցողներին ընդունել որբանոց. այդ, մեր կարծիքով սխալ կը լինի, ընդհակառակը խնամքի և պահպանութեան կարիք զգում են աւելի փոքրերը քան թէ մեծերը։ Լաւ կը լինէր ոչ մի սահմանափակում չդնել տարիքի մէջ, այլ հաւաքել անխտիր թէ փոքր և թէ մեծ որբերին, որով որբանոցը իսկապէս որ հասած կը լինի իր նպատակին։ Բացի սրանից, ցանկալի էր, որ որբերի թիւը չսահմանափակւէր, այլ աշխատէին հաւաքել բոլոր որբերին, որքան որ կը գտնւեն Ալէքսանդրապոլի շրջանում։

Ինչպէս լսում ենք, Քաղաքների Միութիւնը նոյնպէս որոշել է բանալ որբանոց Ալէքսանդրապոլում 100 որբի համար։ Դա արդէն գալիս է թեթևացնելու Եղբ. Օգ. կոմիտէի գործը։

Եա Էմ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.— Հետաքրքիր տեղեկութիւն. Գէորգեան ճեմարանի հոգաբարձութեան առթիւ էջմիածինը որոշում է յատուկ կոնդակով շնորհակալութիւն անել քաղաքագլուխ կոմս Տոլստոյին և յանձնարարում է Մաքսուտեան վարդապետին Թիֆլիս գնալ ներկ գնելու և այդ կոնդակը գրչագիր տառերով և ծաղկեայ շրջանակով նկարել տալու։ Մաքսուտեան վարդապետը վերադառնալով 85 ռ. հաշիւ է ներկայացնում, որից 13 ռ. ներկերի ծախս, իսկ մնացածը ճանապարհածախս։ Եւ գիտէք ինչ. կոնդակի վրայ արւած բոլոր ծախսերը վճարւում է յօգուտ գաղթականների վճարւած գումարներից, և չի նշւում յետ գիւղական ծախք. թէև այդ նպատակների համար յատուկ գումար կայ։

Թ. Թաղևոսեան

ՂՐՂԻ (Ղազախի գաւ.).— Գարունը սկսել է, գիւղացին ոչ հաց ունի և ոչ սերմացու։ Անցեալ աշունից գիւղացէք համախոստականով դիմեցին Գիւղատնտ. և Տնայն. ընկերութեան և այդ յուսով մինչև օրս սպասելով դեռ ոչինչ չեն ստացել, այն ինչ շուտափոյթ օգնութիւնը անհրաժեշտ է։

Կէս-Խաճեան

ՀԱՄԱՄԼՈՒ.— Մարտի 19-ին տեղս եկաւ թեմական տեսուչ պ. Թ. Խըզմալեանը, այցելեց տեղական ծխական և գաղթականական դպրոցները և ունկնդրելով դասերին, մի քանի դիտողութիւններ ընելէ յետոյ ընդհանրապէս գոհ մնաց ուսուցումէն։ Նոյն օրը, ճաշէն յետոյ տանուտէրի և ուսուցիչների հետ այցելեց մօտակայ Սպիտակ գիւղն ալ, ուր տեղի ունեցած ժողովին մէջ խօսեց ուսման անհրաժեշտութեան մասին և յորդորեց, որ առաջիկայ ուսումն. տարեշրջանին անպայման դպրոց ունենան գիւղին մէջ։ Ժողովը գիտակցելով այդ բանը, անմիջապէս ժատեանի մէջ արձանագրել տւաւ 200 ռ. իբրև կրթական տուրք նորաբաց դպրոցին։

Գաղբական

ԴԱՒԱԼՈՒ.— Այստեղ մօտաւորապէս ապրում են 180—200 տուն գաղթականներ խիստ թշւառ կացութեան մէջ. ամէն տեղ ազգային նւէրները առատօրէն բաշխւում են, իսկ այս գերկ-ւածները միայն հեռւանց լսում են ու սպասում։ Յունւ. 24-ից մինչև մարտի 15-ը դեռ նպաստ չի տւել այստեղ։ Մի մասը ստացաւ անցեալ 10-ին, իսկ մնացածը դեռ սպասում է. բարեկեն գանից խեղճերը փոխ-ալիւր են ուտում, որոնց արժէքը մնում է իբր պարտք խեղճերի վրայ։ Տղամարդիկ անխտիր գրւած են Սարիղամիշ աշխատելու, իսկ կանայք և երեխաները տառապում են քաղցից ու մերկութիւնից։ Ամէն տեղ լիառատ ջուր և անկողին ցրւեցին, իսկ այստեղ 8—10 անձի մի վերմակ և մի ներքնակ կամ գլխաւոր տրւեցաւ։ Ազգ. մարմինների ուշադրութիւնն ենք հրաւիրում այս թշւառների վրայ։

Գաղթական

ԹԱՂԼԱՐ.— Վեց ջաղէս երկար ընդպաստելուց յետոյ տեղումս թոյլատւութիւն ստացւեց բանալ մանր վարկի ընկերութիւն։

— Երկար ժամանակ երաշտ լինելուց յետոյ ծաղկել էին հոնին, սալորենին։ Բայց մի քանի օր առաջ մեծ ձիւն եկաւ ու փչացրեց բացւած ծաղիկները։ Եղանակները անձրևային են։

— Տեղումս թանգութիւնը օրէցօր մեծ ծաւալ է ստանում։ Ցորենի փութը արժէ 3 ռ. 20 կ., շաքարը 38 կ., միսը 40 կ.։

Բ. Տէր-Դանիէլեան

ԱԽԱԼՔԱԼԱՔ.— Ախալքալաքում ապաստան գտած Արդահանի, Տանձոտի և Ոլթիի գաղթականները որոշել են Զատկական տօներին վերադառնալ իրենց գիւղերը և վերսկսել վար ու ցանքը, ծխեցնել իրենց աւերւած օճախները։ Վերադառնալու հոգացողութիւնը, ինչպէս միշտ, այնպէս էլ այժմ իր վրայ է վերցրել Բար. Ընկ. տեղիս ճիւղը և այդ առթիւ արդէն դիմել է ընկերութեան կենտրոնին, որպէսզի վերջինս նիւթական աջակցութիւն ցոյց տայ յիշեալ գաղթականներին վերադառնալու։

— Մեր դպրոցի հոգաբարձութիւնը, ի նկատի ունենալով ներկայ անասելի թանգութիւնը, ուսուցիչների ռոճիկներին աւելացրեց 20 տոկոս։

— Դրամատիքական ընկ. տեղիս ճիւղը դիմել է դերասան Աբելեանին և իր կնոջը, որպէս զի Զատկական տօներից յետոյ գան ներկայացումներ կազմակերպեն։

— Ուսումն. տարւայ սկզբից մինչև օրս էլ դեռ չի վերացել գաղթական աշակերտների մէջ եղած հիւանդութիւնը. անհրաժեշտ է շուտափոյթ օգնելու հարկ կայ, այլապէս կարող է վարակիչ դառնալ բոլոր աշակերտների համար։

ՏէԳ

ՃԱԹՂՈՒԱՆ (Երևանի գաւ.)— Մարտի 7-ին գիւղս եկան Արամուսայ շրջանի գաղթականական կոմիտէի կողմից Ց. Կարապետեան և երկու ուրիշ անձնաւորութիւններ գաղթականներին փետրւար ամսւայ նպաստը բաժանելու, այնինչ նպաստը պէտք է բաժանւէր փետր. 15-ին։ Շրջանիս գաղթականութիւնը չունի ոչ բժիշկ և ոչ հիւանդանոց, չնայած տաս գիւղում ապրում են հարիւրից մինչև 250 գաղթականներ և շրջանս 12—20 վերստ հեռաւորութեան վրայ է գտնւում։ Շորերի բաժանումը սկսել է յունւարի 1-ից և շատ անարդարացի կերպով—կան գիւղեր, որ տասներեք անգամ են ստացել և կան գիւղեր, որ երեք անգամ են ստացել. մինչև հիմա ոչ վառելիքի փող են ստացել և ոչ էլ բնակարանի։ Այս բոլոր դժւարութիւնները տանում է տեղական աղքատ ժողովուրդը։

Ջանիկ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

«Daily News»-ի թղթակիցը Աթէնքից հեռագրում է, որ Զմիւռնիայի վալին Քահեան Համաձայնութեան պետութիւնների ներկայացուցիչներից մէկին հարցնում էր ուղղել, թէ համաձայն են արդեօք դաշնակիցները անջատ հաշտութիւն կնքել Թիւրքիայի հետ, և հետևեալ պատասխանն է ստացել. դաշնակիցները պատրաստ չեն հաշտութիւն կնքել Թիւրքիայի հետ, նրան անբնական համարելով լուրջ դիմադրութեան. բացի սրանից դաշնակիցները չեն ուզում իրենց կապկանդել Թիւրքիայի ապագայ վիճակի մասին։

— «Нов. Вр.»-ին հեռագրում են Բուխարեստից. Շէֆքէթ-փաշան Բուխարեստում եղած ժամանակ յայտարարել է, որ ռուսների աջողութիւնները Հայաստանում, Էրզրումի գրաւումը և ռուս զօրքերի յառաջխաղացումը մեծ նշանակութիւն չունին, որովհետև Բաղդադ կամ Սկիւտարի համենլու համար ռուսները դեռ և շատ հարիւրաւոր կիլոմետր տարածութիւններ պիտի անցնեն։ Ռուսաստանի հետ անջատ հաշտութիւն կնքելու վերաբերմամբ Շէֆքէթ-փաշան յայտարարել է, որ Թիւրք հայրենասէրի պաշտպանութիւնից զատ ուրիշ պատճառներ ևս հարկադրում են իրեն վճռապէս հերքել այդ մասին տարածւած լուրերը։

— «Ран. Утр.»-ի առնելով, Բուխարեստում խօսւում է, որ բուլղարները անգլօ-ֆրանսացիներին առաջարկել են դադարեցնել իրենց գործակցութիւնը աւստրօ-գերմանացիներին հետ, եթէ դաշնակիցները Մակեդոնիայի բուլղարների գրաւած մասը ճանաչեն իբրև Բուլղարիայի սեփականութիւն։

— Պոլսից ստացւած տեղեկութիւնների համաձայն, «Մ. և Ց.» կոմիտէի յայտնի անդամ Մուհիր բէյը, որը ագիտացիա էր մղում մինիստրների կաբինետի դէմ, մեռած է գտնւած բանի մահւան նշաններով։ Կառավարութեան դէմ հետզհետէ ծաւալւող շարժման հետևանքով՝ բռնկւած է ժողովրդական խռլամ քարոզիչ Թեկի-Զադէն։

— Ամստերդամից հաղորդում են, որ գերմանացիները Վերդենի տակ կորցրել են 450,000 մարդ, որոնցից 150,000-ը սպանւած է։

— Ռումինական «Ունիվերսուլ»-ը առաջնորդող յօդւածի մէջ ապացուցանում է, որ պատերազմը կը վերջանայ այս ամառ, որովհետև գերմանական բլոկի արտաքին և ներքին միջոցները սպառւում են։ Այդպիս նշանները համարւում են գերմանացիների գրոհների թուլանալը Վերդենի մօտ, նրանց անկարողութիւնը արևելեան ճակատում և անօգուտ կռիւը իտալացիների դէմ. Այս բոլորը ի չիք է դարձնում գերմանացիների ծրագիրները Միջերկրական Արևելքում. Նրանք ձգտում են հաշտութիւն կնքել նախ քան դաշնակիցների ընդհանուր յարձակման դիմելը։

Խմբագիր՝ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Թիֆլիսի Հայկ. Կոմիտէն ստացել է ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ հետևեալ միանւագ նպաստները. Գր. Ռեազեան 500 ռ., Գ. Տէր-Յարութիւնեան 100 ռ., Խ. Կարճիկեան 75 ռ., Հին-Նախիջևանի Կզնութ գիւղի իգ ծախող ընկերութիւնից 53 ռ. 60 կ., Զ. Պապովեան 250 ռ., Թիֆլիսի բժիշկներից 270 ռ., Ալէքսանդրեան հիւանդանոցի Ռեօնազենեան կաբինետի ծառայողներից 12 ռ., Ս. Աւետիսեան 10 ռ., Աբ. Սրեդեան 25 ռ., Թիֆլիսի հացթուխներից (փռնչիներից) 301 ռ. 90 կ., բժ. Մզառէւլեան 15 ռ., Եղբ. Աբրահամեաններ 100 ռ., Մ. Պօղոսեան 100 ռ., Ն. Թորոսեան 10 ռ., Եղբ. Գրիգորեաններ 50 ռ., Ց. Խունունց 120 ռ., Ց. Կոլճիկեան 100 ռուբ., տիկ. Մ. Սաքայեան 50 ռ., Եղբ. Կաֆեաններ 200 ռ., Գ. Գուրգէնով 200 ռ., Ն. Շաքեան 50 ռ., Ց. Քոչարեան 25 ռ., «Սոլոտատ» ընկերութիւնից 50 ռ., Ն. Եւտիե 50 ռ., տիկ. Մ. Եաղուբեան 50 ռ., Ջանեան և Աշխարումեան 50 ռ., Ի. Մամասախլիսով 50 ռ., բժ. Զաչիկեան 127 ռուբ., Ի. Խարազեան 50 ռ., Ս. Պոյաճեան 25 ռ., Ս. Վարդանեան 50 ռուբ., տիկ. Ե. և պ. Ա. Աւագեաններ 50 ռ., Եղբ. Բոսաղջեաններ 50 ռ., Ն. Լիսիցեան 100 ռ., Սուգանաջեան 50 ռ., Երամեան-Դրիգորեան կրպակից 200 ռ.։

Նախկիններին հետ միասին 14,642 ռուբ. 44 կ.։ 755 0—17

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՍԿԱԼԻ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ ԻՆՉՊԷՍ ԵՆ ՄԵՌՆՈՒՄ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ

ՄՈՒԲԱՇԻ գիւղում կամաւորների համար հաւաքւած նւիրատուի ցուցակը. Ց. Ցովսէփեան 2 փութ 20 ֆ., Егоръ Караяновъ 2 փ. 20 ֆ., Ց. Սարգիսեան 2 փ., Ս. Թորոսեան 1 փ., Ց. Ցովսէփեան 1 փ., Հ. Սրբոսմաթեան 1 փ., Խ. Օհանեան 1 փ., Գ. Տէրտէրեան 1 փ., Խ. Զոլաքեան 25 ֆունտ, Հ. Վալիզեան 20 ֆ., Մ. Զոլաքեան 20 ֆ., Տ. Օհանեան 20 ֆ., Կ. Տէրտէրեան 12 ֆ., Ա. Զաքարեան 10 ֆ., Մ. Ե. ...րանոսեան 10 ֆ.։

341 1—1 Մանաթ Ճերմաքեան

Дозв. воен. ценз.

Типографія „МАМУЛЪ“, Лорисъ-Меликовская ул. № 22.